ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 65

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

18-ը փետրվարի 2023թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 33-ը, որից 1-ը ZOOM հարթակի միջոցով:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Ա. Հ. Մակարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում:

   (զեկ.՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան**):

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան**)

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2023-2024 ուստարվա ուսման վարձավճարների չափերի քննարկում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. մարտի12-ի նիստի թիվ 58/4 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգում փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2021-2022 ուստարվա

ուսանողական հարցումների արդյունքների մասին:

(Զեկուցող՝ ՈՒՄՎ պետ Ա. **Դավթյան**)

6. **Ընթացիկ հարցեր**

6.1. ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2022թ.-ի կատարման արդյունքների մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)

6.2. ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ Գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյան)**

6.3. ԵՊՀ ԻՄ-ում հակակոռուպցիոն ծրագրի իրականացման աշխատանքները համակարգող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան)**

Բաց քվեարկությամբ՝ 32 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u> **՝** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյանի** հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը կազմվել է հաշվի առնելով ԵՊՀ համապատասխան ժամանակացույցը, ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագիրը, ընդգրկվել են նաև ստորաբաժանումների ղեկավարների և գիտական խորհրդի անդամների կողմից ներկայացված հարցեր՝ մասնավորապես առաջարկներ են ստացվել ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի և ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանի կողմից:

Նիստերի ժամանակացույցը ամբողջական կարող եք տեսնել **հավելված 1 ում:**

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մակարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ

ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը և այլոք:

Արտահայտվողները առաջարկեցին ներկայացված տարբերակով հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

Բաց քվեարկությամբ՝ 32 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 65/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երկրորդ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 15 անվանական կրթաթոշակ, որից 12-ը ԵՊՀ ԻՄ-ի բյուջեի հաշվին, իսկ 3-ը՝ արտաբյուջետային: 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում անվանական կրթաթոշակի հավակնում է 24 ուսանող: Ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկվել են անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների թեկնածությունները: Արդյունքում, հաշվի առնելով ուսանողների առաջադիմությունը, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվում 14 անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, որոնք համապատասխանում են պահանջվող չափանիշներին: Ցուցակը կարող եք տեսնել **հավելված 2-ում**:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Մ. Զուրաբյանը, Գ. Սիմոնյանը և այլք:

Մասնավորապես Մ. Զուրաբյանը նշեց, որ անհրաժեշտ է «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի համար սահմանել հատուկ անվանական կրթաթոշակ, որպեսզի հնարավոր լինի դիմել ՀՀ-ում «Ռուսական տուն» կազմակերպությանը ֆինանսավորում ստանալու համար կամ անվանական կրթաթոշակների չափը քչացնել

ավելի շատ ուսանողների կրթաթոշակ տալու համար։ Մ. Զուրաբյանը առաջարկեց նաև ԵՊՀ ԻՄ-ի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողներին տալ հավաստագիր։

Ա. Մակարյանը նշեց, որ անվանական կրթաթոշակը վճարվում է համաձայն գործող իրավական ակտերի, հիշեցրեց, որ Բնական գիտությունների ֆակուլտետի դոցենտ Գ.Սարգսյանը իր անձնական միջոցների հաշվին 5 ուսանողի հատկացրել է կրթաթոշակ, իսկ հավաստագրեր տալու մասին կարելի է մտածել։ Ա. Մակարյանը նշեց, նաև, որ ԵՊՀ-ում քննարկումներ են արվում անվանական կրթաթոշակների քանակը քչացնելու հաշվին սահմանված դրամական միջոցների չափը ավելացնելու համար, և Մասնաճյուղը այս հարցում նույնպես պետք է հետևի ԵՊՀ-ին։

Այնուհետև Գ. Սիմոնյանը և Մ. Զուրաբյանը նշեցին, որ իրենք էլ պատրաստակամ են իրենց սեփական միջոցներից լավագույն ուսանողներին՝ համապատասխանաբար Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա և Ռուսաց լեզու և գրականություն մասնագիտությանբ մասնագիտություններով, հատկացնել կրթաթոշակ։

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 65/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

<u>Օրակարգի երրորդ</u> **՝** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2023-2024 ուստարվա ուսման վարձավճարների չափերի քննարկում» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը։

Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենության՝ 2023թ. հունվարի 27-ի նիստում հարցը քննարկվել է, և որոշվել է առաջարկել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին ոչ մեծ չափով (հիմնականում 20 և 30 հազար ՀՀ դրամի չափով) փոփոխություններ կատարել ԵՊՀ ԻՄ-ի՝ 2023-2024 ուստարվա ուսման վճարների չափերում (տես հավելված 3), նա նաև հավելեց, որ ԵՊՀ ԻՄ վաձավճարների չափերը եղել են և մնում են ՀՀ-ում ամենացածրերից։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Վ. Ավագյանը, Տուրիզմի կառավարման և

մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը։

Մասնավորապես Վ. Ավագյանը առաջարկեց Հայոց լեզու և գրականություն մասնագիտության վարձավճարը թողնել նույնը, իսկ մյուս արտահայտվողները առաջարկեցին չանել բացառություններ, քանի որ, Մասնաճյուղի հիմնական եկամուտը վարձավճարներն են, իսկ որակյալ կրթություն մատուցելու համար անհրաժեշտ են բավարար դրամական միջոցներ։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 65/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 10-րդ և 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 10-րդ և 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ ԵՊՀ ԻՄ-ի 2023-2024 ուստարվա ուսման վարձավճարների չափերի նախագծին՝ համաձայն հավելված 3-ի:
2. Նախագիծն ուղարկել ԵՊՀ հաստատման։

<u>Օրակարգի չորրորդ</u>՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. մարտի12-ի նիստի թիվ 58/4 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգում փոփոխություններ կատարելու մասին» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանի հաղորդումը։

Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ Իմ-ում կան գործընթացներներ, որոնց արդյունավետության գնահատման և խրախուսման պատասխանատվությունը տնօրենության վրա է, անհրաժեշտ է այդ գործընթացները կանոնակարգել։ Նշվեց, նաև, որ նախկին կարգում առաջարկվող փոփոխությունների մի մասը եղել է, սակայն հետո հանվել են։ Մասնավորապես՝ ունենք աշխատակիցներ, որոնք հրապարակել են մեթոդական աշխատանքներ, որոնց համար չենք կարողանում խրախուսել։ Ա. Մակարյանը նշեց նաև, որ ունենք ԵՊՀ ԻՄ կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգ, որը չի աշխատում և տրվող միջոցները քիչ են։ Այնուհետև Ա. Մակարյանը առաջարկեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի

մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. մարտի12-ի նիստի թիվ 58/4 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգում աղյուսակ 2-ում ավելացնել հետևյալ 3 կետերը և հաստատել կարգ նոր խմբագրությամբ համաձայն հավելված 4-ի։

Հ/Հ	ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔԻ) ՆԿԱՐԱԳԻՐԸ	ՄԻԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ (D-Ն) (ՀՀ ԴՐԱՄ)	ՄԵԿ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԼՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
1.	ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական ձեռնարկի հրապարակում	1 կրեդիտին համարժեք նյութի արժեքը՝ 30000	D-ի և կրեդիտների արտադրյալը բաժանվում է (համա)հեղինակների թվին
2.	ԵՊՀ ԻՄ-ում միջազգային կամ տեղական գիտաժողովների/ ամառային դպրոցների կազմակերպում	300 000	D-ն կազմկոմիտեի ղեկավարի զեկուցագրի համաձայն բաժանվում է կազմակերպիչների միջև
3.	Հետազոտական ինքնուրույն աշխատանքների թեմաներով ԵՊՀ ԻՄ ուսանողի կողմից հրապարակված աշխատանքի ղեկավարում	30 000	D-ն բաժանվում է ԵՊՀ ԻՄ աշխատակից համահեղինակների թվին

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը, Մ. Զուրաբյանը, Մ. Աթոյանը և այլք։ Մասնավորապես Գ. Հովհաննիսյանը առաջարկեց մտցնել գիտաժողովի ռեյտինգ հասկացությունը, իսկ Մ. Աթոյանը՝ տարբերակել միջազգային և տեղական գիտաժողովները։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 65/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2022 թվականի մարտի 12-ի 58/4 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը» նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 4-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Օրակարգի հինգերորդ</u> **՝** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2021-2022 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը:

Ա. Դավթյանը նշեց, որ Ուսումնամեթոդական վարչությունը ֆակուլտետների հետ համատեղ հարցումները կազմակերպել է համաձայն «Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կարգ»-ի, հարցաշարի և ժամանակացույցի (առաջին կիսամյակի հարցումներն իրականացվել են փետրվարի 5-ից մինչև 20-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների և մարտի 10-ից մինչև 25-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար, իսկ երկրորդ կիսամյակի հարցումները՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ը՝ առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների համար): Թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում հարցումներն իրականացվել են առցանց եղանակով, համալսարանական էլեկտրոնային հասցեների միջոցով:

2021-2022 ուստարվա I կիսամյակի հարցումներին մասնակցել են մասնաճյուղի՝ առկա ուսուցման 335 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 58.26 %-ը), հեռակա ուսուցման 42 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 6.81 %-ը): II կիսամյակի հարցումներին մասնակցել է ուսանողական հիմնական համակազմի 0.47 %-ը: Հետևաբար դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2021-2022 ուստարվա ուսանողական հարցումների վերլուծությունը օբյեկտիվ պատկեր կարող է արտահայտել միայն I կիսամյակի հարցումների հիման վրա (3 տարիների համեմատությամբ):

Հարցաշարի առաջին երկու հարցերը, որոնք վերաբերում են քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց կամ հարկադրված մասնավոր պարապմունքների միջոցով գնահատականներ ստանալուն, «այո» պատասխան չի գրանցվել:

Դեկանատի աշխատակիցների վերաբերյալ գրանցված ցուցանիշով ամենաբարձրը առկա ուսուցման համակարգում ունի Բնագիտական ֆակուլտետը:





Ըստ ամբիոնների՝ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնը, իսկ ամենացածր ցուցանիշը՝ Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնը։



Ֆակուլտետների ամփոփմամբ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Կիրառական արվեստի ֆակուլտետը:



Հարցման արդյունքները տրամադրվել են ամբիոններին նիստերում քննարկելու համար:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը, ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի ներկայացուցիչներ և այլք:

Մասնավորապես կարևորվեց այն հանգամանքը, որ ուսանողները քիչ են օգտագործում համալսարանի կողմից հատկացված էլ.հասցեները որոնց միջոցով նրանց ուղարկվում են էլեկտրոնային հարցումները: Արժևորվեց նաև ուսանողական կառույցների ներկայացուցիչներին հարցման գործընթացներում ներգրավելու հանգամանքը:

Առաջարկվեց ուսանողների շրջանում իրականացնել իրազեկման և էլեկտրոնային հասցեների հետ կապված տեխնիկական խնդիրների շտկման աշխատանքներ՝ հարցումներին նրանց մասնակցության բարձր ցուցանիշ և օբյեկտիվ պատկեր ապահովելու նպատակով:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ

- ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2021-2022 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի վերաբերյալ Ա. Դավթյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

6.1.Լսեցին «ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2022թ.-ի կատարման արդյունքների մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի զարգացման՝ 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի 3 նպատակների 19 խնդիրների 101 գործողությունների իրականացման համար մշակվել է մարտավարություն, որը ներառել է շուրջ 307 նպատակային քայլեր՝ 325 ակնկալվող ցուցիչներով:

2022թ. կարճաժամկետ պլանը ներառել է ամբողջ պլանի մարտավարական քայլերի 70%-ը (215 քայլ). 92-ը իրականացվելու է հետո: 2022թ. ապրիլից դեկտեմբեր ամիսներին ռազմավարական պլանի 19 խնդիրների 101 գործողությունների մարտավարական 215 քայլերից իրականացվել կամ ընթացքի մեջ է 66%-ը, իսկ 34%-ի շուրջ աշխատանքներ չեն կատարվել:

Չիրականացված գործընթացների առումով նշվեց, որ ըստ ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույցի՝ բավականին գործընթացների իրականացման համար վերցված են ավելի

երկար ժամկետներ: Դրանք, իհարկե, ներառվել են կարճաժամկետ պլանի մեջ այն միտումով, որ ստորաբաժանումները կձեռնարկեն տրված ուղղություններով անհրաժեշտ քայլեր, կկատարեն նախապատրաստական աշխատանքներ՝ բուն արդյունքին հասնելու համար: Այդ է պատճառը, որ կարճաժամկետ պլանով նախատեսված գործընթացների գրեթե 50%-ը կա՛մ ընթացքի մեջ է, կա՛մ չի սկսվել անհրաժեշտ նախապայմաններ չլինելու պատճառով: Ա. Մակարյանի զեկույցի ներկայացումը կարող եք տեսնել հավելված 5-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք:

Արտահայտվողները կարևորեցին կատարված աշխատանքները, դրանց վերլուծությունները ԵՊՀ ԻՄ-ի հետագա գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2022թ.-ի կատարման արդյունքների մասին» հարցի վերաբերյալ Ա. Մակարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

6.2.Լսեցին « ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյանի** հաղորդումը:

Մ. Մխիթարյանը նշեց, որ հաշվետու տարում ԵՊՀ ԻՄ-ի դրամական միջոցների մուտքերը (եկամուտները) կազմել են 491.630.1 ՀՀ դրամ, իսկ ելքերը (ծախսերը)՝ 530.578.9 ՀՀ դրամ: Մուտքերի ամենամեծ հոդվածն առաջացել է վճարովի ուսուցման ծառայություններից (266.055.8 ՀՀ դրամ) և պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից (141.843.0 ՀՀ դրամ), իսկ ծախսերի ամենամեծ հոդվածը «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր»-ն են, որոնք կազմել են 446.869.0 ՀՀ դրամ: ԵՊՀ ԻՄ 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի մասին Մ. Մխիթարյանի հաղորդումը կարող եք տեսնել հավելված 6-ում:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի մասին» հարցի վերաբերյալ Մ. Մխիթարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

6.3.Լսեցին «ԵՊՀ ԻՄ-ում հակակոռուպցիոն ծրագրի իրականացման աշխատանքները համակարգող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում հակակոռուպցիոն ծրագրի իրականացման աշխատանքները համակարգող հակակոռուպցիոն հանձնաժողովի կազմը ձևավորելու համար ԵՊՀ ԻՄ-ի ստորաբաժանումներում անց են կացվել հակակոռուպցիոն հանձնաժողովի անդամի պարզ և թափանցիկ ընտրություններ. ներկայացվել են հետևյալ թեկնածուներին՝ տես հավելված 7: Ա. Մակարյանը նշեց, որ հանձնաժողովը պետք է առկա նախագծի հիման վրա կազմի ԵՊՀ ԻՄ- ի հակակոռուպցիոն գործողությունների ծրագիրը, ներկայացնի գիտական խորհրդի հաստատմանը, այնուհետև համակարգի հակակոռուպցիոն ծրագրի իրականացման աշխատանքները: Ա .Մակարյանը կարևորեց նաև հակակոռուպցիոն հանձնաժողովի և էթիկայի հանձնաժողովի սերտ համագործակցությունը հակակոռուպցիոն գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու գործում:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 65/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 14-րդ և 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 14-րդ և 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի հակակոռուպցիոն ծրագրի իրականացման աշխատանքները համակարգող հանձնաժողովի կազմը համաձայն հավելված 7-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ